


# ՊՍՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԳԱՅՈՒՄ



Ա

Անցեալ տարիէն սկսած եմ հրատարակել Բագմավկայի մէջ Հայ եկեղեցւոյ պատմութեան վերաբերեալ քանի մը կենսական խնդրոց ուսումնասիրութիւնը, որուն զիտեմ թէ լարուած ուշադրութեամբ մը կը հետևին հանդիսիս ընթացողները: Ոմանք իրենց տեսութիւններն ալ ինքնաբերաբար հազորդեցին ինձ նամակաւ: Երկու դասակարգի կը բաժնուին աշոնք, աշխարհականք ու եկեղեցականք, որոց խորհուրդներն ալ կը տարբերին իրարմէ, և ուշագրաւ կը դարձնեն միոյն և միւսին հոգեբանութիւնը:

Աշխարհականներէն մին կը զրէր ինձ նիւ Երրկէն. « Բագմավկայի մէջ մեծ հետաքրքրութեամբ կարդացած եմ ձեր ընտիր յօդուածաշարքը, Հայաստանեայց Եկեղեցիէ Լուսաւորչէն յատալ խորագրին ներքեւ: — Ուրիշ մը ժընեւէն. « Մեծագոյն հետաքրքրութեամբ է որ կը հետևիմ ձեր ծայր աստիճան կարեւոր և հմտալից պատմաքննական յօդուածները մեր Եկեղեցւոյ ծագմանը վրայ »: — Երրորդ մը Պարիսէն՝ թէ գաղիական հանդիսի մը մէջ ինքն ալ հերքեր էր « այս առասպելը »: այսինքն առաքելական քարոզութիւնն ի Հայս: — Չորրորդ մը Պոլսէն. « Բագմավկայի մէջ ձեր անսպիտակ և զեղեցիկ յօդուածները կը կարդամ և շատ կ'օգտուիմ... կը խոստովանիմ՝ թէ հնախոսական քննադատութիւննիդ սքանչելիորէն արդարացի է: Եթէ Օրմանեան Սրբազան ողջ ըլլար, ձեր խորհրդովը պիտի ցալէր »: կը հաւատամ՝ որ այդ ինքնաբեր ղիտողութեանց մէջ ներքին համոզումը կը խօսէր, անկախ ամէն կաշկանդումներէ:

Ընդ հակառակն վրդովում պատճառած էի եկեղեցական դատուն: Անոնց մին կը զրէր. « Հետաքրքրութեամբ կը հետևինք

ձեր քննադատականներուն Բագմավկայի մէջ...: Տարակոյս չկայ որ Օրմանեան անքննադատելի հեղինակ մը չէ. բայց զիւրին չէ քննադատել զայն, երբ Եկեղեցւոյ աւանդութիւններուն վրայ կը խօսի »: և խորհուրդ կու տար ամիսփել « Հայոց Թաղէոս առաքեալին դէմ ձեր անազորոյն սլաքները: Թող տուէք որ ազգային վաղեմի ասեղոտրիւնը Յայ իւր խորհրդաւոր գոյութեան մէջ: Ո՛ր եկեղեցւոյն աւանդութիւնը, իր ծագման մասին, կը դիմանայ ձեր մեթոտով եղած քննադատութեան մը »: — Եւ ուրիշ մը կը զրէր՝ թէ տապար ի ձեռին կը շարձէի մեր հին աւանդութիւնները, զորս սակայն չպիտի յաջողէի ջնջել ժողովրդեան մտքէն:

Կարդացի այդ բոլորը, յարգեցի իւրաքանչիւրին խորհելու ազատութիւնը, և շարունակեցի գործս: Բայց եկեղեցական դար սկսաւ նաև հրապարակաւ ծայր բարձրացնել: Նախ Ամերիկայի նորածին Փարոսի առաջին պրակին մէջ երևան եկաւ Տիրայր Ի. Վ. Մարգարեան՝ բարեկարգական յօդուածով մը, որ կը սկսէր հայ եկեղեցւոյ առաքելականութեամբ, կ'անցնէր քանի մը խօսք ուղղելու ինձ, և կը վերջացնէր՝ առաջարկելով « Իսպառ ջնջել կուսակրօնութիւնը »: Յետոյ երեցաւ Սիոնի խմբագրականը (Յունիս), որ կը դատապարտէր իմ գործս: Չէի կրնար լռութեամբ անցնիլ այդ յօդուածոց վրայէն, մանաւանդ Սիոնի, որ լրջութեան երևութովը վտանգել կը թուէր իմ յայտնած համոզումներս մեր առաքելականութեան մասին:

Երկուքին համար ալ ցաւի նիւթ մ'է Օրմանեանի անունը: « Այս յօդուածներու շարքը, կ'ըսէ Փարոս, շատ զիտուծաւոր կերպով պատրաստուած է, և յանուն նաչառութեան ծայրէ ի ծայր անուղղակի

քննադատութիւնն է մերս պանծալի բա-  
նասէր Օրմանեանի Հայոց կենդեցիիկն»։ Եւ  
Սիոն՝ թէ գործս «աւելի պատրուակ մըն  
է հարուածեալու հանգուցեալ Օրմանեան  
Սրբազանը և անոր Ազգապատմութիւնը, քան  
թէ պատմական շինիչ աշխատանք մը»։

Պատասխանս պարզ է։ Երբ խարխուղ  
տան մը գեանիին վրայ ուզենք նոր մը  
շինել, հինը կը քանդենք նախ։ Նոյն փո-  
խանակութիւնը կը կատարուի նաև գրա-  
կանութեան մէջ. նոր կարծիք կամ տե-  
սութիւն մը տալու համար հասարակու-  
թեան, նախ կը հերքուի հինը, ցոյց տալով  
անոր տկար կողմերը, պաշտպանները և  
անոնց փաստերուն անբաւականութիւնը.  
բանասիրութեան պահանջն է այս։ Այս  
ուղղութեան հետեցայ ես ալ ուսումնա-  
սիրութեանս մէջ, ցոյց տալով ինձ ծանօթ  
բոլոր այն բանաւորները՝ որոնք աւան-  
դական համոզմանց հետեոյ ու կրկնող  
եղած էին պարզմտութիւն, սկսեալ իմ նախ-  
կին միաբանակիցներէս և լուսթեամբ չէի  
կարող պատասխանել Օրմանեանի, որ ոչ  
միայն կրկնող մ'եղաւ, այլ անսովոր ճի-  
գեր ու հնարքներ ի գործ դրաւ՝ խար-  
խուղ և անհիմն սուտը վեր բռնելու և  
զայն հաստատուն ցոյց տալու. որով և  
ես հարկադրուած էի առաւելագոյն չա-  
փով մը զբաղելու իրեն հետ։ Եւ իւր զօ-  
րաւոր կարծեցուցած փաստերը խախտե-  
լով է՝ որ կրնայի Սիոնի պահանջած «չի-  
նիչ աշխատանքը» պատրաստել, ինչպէս  
վկայեցին վերև անաչառ ընթերցողներս։  
Օրմանեան եզականութիւնն ունեցաւ շատ  
խօսելու և շատ զբելու հայ եկեղեցւոյ  
անցելոյն մասին։ Հետեաբար այսուհետև  
հայ միաքնն ինչ ալ խորհի ազատութիւն,  
իրեն հակառակ պիտի լինի, և պիտի կա-  
րենայ «զինքը հարուածելու պատրուակ  
մը» համարուի իւր աշակերտներէն, ո-  
րոնք այդպէս կը փորձեն հայ բանասի-  
րութեան անուին առջև քար մը դնել։  
Սիւալ ու վնասակար դրութիւն է այդ։  
Այն աւանդութիւնը՝ զորս Օրմանեան աշ-  
խատեցաւ ամրապնդել, քան զինք զարե-  
րով հին էին. և զանոնք զօրացնելու և

յաւերժացնելու ջանքերը՝ չէին կարող զա-  
նոնք քննադատելու մեր իրաւունքը կապ-  
տել կնքմէ. ոչ ալ այս իմաստով զաշինք  
մը մեքեց նա ապագայ բանասիրութեան  
հետ։

« Ինչո՞ւ, կը հարցնէ ֆարոս, հոգեւոյս  
Օրմանեանի ողջութեանը, երբ ինք (ես)  
Պոլիս կը պաշտօնավարէր, չհամարձա-  
կեցաւ հրապարակաւ իր դիտողութիւններն  
ընել, երբ անկողի էր »։ Եւ Սիոն անոր  
արձագանք տալով, գործս որակեց «չատ  
ուշացած քննադատական փորձեր»։ Նախ  
կը պատասխանեմ՝ թէ բանասիրութեան  
հետ շատ ընտանի լինելու չէ մարդ՝ իմ  
ձեռնարկութեանցս և ապացոյցներուս ան-  
կեղծութեան վրայ կտակածելու համար։  
Վերոյշիշակ նամակագիրներէս մին, որ  
բանասիրական զարգացում ու ճաշակն  
ունի, զիս փաղաքօրէն կ'որակէր «բա-  
նասիրաց ամենեւն անաչառ»։ Ամենեւ լի-  
նելու յաւակնութիւնը չունիմ. բայց խիղճս  
կը վկայէ՝ թէ անոցմէ մին եմ ապահու-  
վապէս։ Յետոյ՝ տարօրինակ կը զտնեմ  
պահանջը՝ որ կամ Օրմանեանի կենդա-  
նութեանը գրէի և կամ բնու չգրէի։ Եւ  
որովհետև քննութեանցս մէջ հարկա-  
դրուած եմ խօսելու յաճախ մեր բոլոր  
անցեալ զարբեր մատենագրաց դէմ, սկը-  
սեալ չորրորդէն, ինձմէ արամբանութիւն  
պիտի պահանջուէր՝ որ ապրէի 16 դար,  
որպէս զի ամենուն ողջութեանը գրէի,  
և ամէնը կարենային պատասխանել ինձ.  
Փափաքելի՛ բայց անկարելի բան մը։ Շատ  
հարցեր մարդուս մտքին մէջ հեռագետէ  
կը ներկայանան, կը մշակուին ու կը  
սպասեն իրենց կարգին՝ հրատարակուելու  
համար։ Ինչ անտեղի է ստիպել որ մահ-  
կանացուն իւր կենաց որոջ ու համառօ-  
տագոյն մէկ շրջանին մէջ ամէն բան ըսէ  
վերջացնէ, և յետոյ ձեռքերը լանջաց վրայ  
ծալած՝ սպասէ վերին կոչողին։

Ինչ նկատուով չեմ համարձակած Օր-  
մանեանի օրով գրելու այս խնդրոց մա-  
սին։ Արդեօք անոր տալիք պատասխան-  
ներէն վախելով։ Բայց ի՞նչ նոր բան  
կրնար ըսել նա պատճառաբանութեանցս

դէմ: կը համարիմ՝ թէ ինչ փաստեր որ ունէր ի նպատակ մեր ամանդութեանց, բոլորն ամփոփեց իւր գրուածոց մէջ, ինչպէս ամէն բանասէր կ'ընէ, և չեմ յուսար՝ որ անոնց լաւագոյններն իրեն հետ տարաւ թաղեց հողին ներքև: Եթէ ունենար զօրաւորագոյն ասպետացիներ, գէթ իւր աշակերտաց ծանօթ պիտի լինէին, և Փարոս պիտի շտաբաւորէր հանգուցելոյն գերեզմանէն սպասելու անոնց:

Չգացուցնէ՞ որ կը խօսի մեր այդ բարեկամաց մէջ. երախտագէտ աշակերտաց զգացումը՝ զոր կը յարգեմ, և որոյ հակառակը պիտի մեղադրէի: Մակայն պէտք է զանազանել: Օրմանեան իբրև դաստիարակ՝ լայն տեղ կը զրուէ իւր աշակերտաց սրտին մէջ, և այս մասին ոչ ինչ ունիմ ըսելիք: Իբրև պատրիարք՝ ազգին ու պատմութեան գործն է գնահատել զայն, իսկ իբրև բանասէր՝ կը պատկանի զրագէտ դասուն, և կը կարծեմ՝ թէ ես ալ իրաւանց բաժին մ'ունիմ կշռելու զայն: Կասկած չկայ՝ որ իւր կենդանութեանը հայ գրական հրապարակի վրայ ամենէն կարկառուն դէմքերէն մին եղաւ նա: Բայց յետ մահու, երբ կը դադրին մարդկային նկատուածները, յեղեղուկ կը դառնայ մատենագրին բախտը. կրնայ աւելի վեր իլլել կամ վար իջնել: Իւր բարոյական տիրապետութեամբ՝ զոր ունեցեր է Օրմանեան աշակերտացը վրայ, կրնայ անոցմէ նկատուել պանծալի բանասեր մը, և կամ ոչ յիշարս քննադատելի հեղինակ մը: Բայց ինձ պէտք է ներուի՝ որ զերծ այդ արդարացուցիչ հանգամանքէն, տարբեր համոզում ունենամ իւր մասին: Ինչ ոչ միայն ես, այլ իւր ողբութեանը Պոլսոյ բանասէր ջըջանակաց մէջ ևս իւր աշակերտաց ունեցածէն շատ տարբեր գաղափար մը կը տեսնէի իւր գրական կարողութեան շուրջ:

Պէտք է թոյլ տրուի ինձ մանաւանդ հատատելի՝ թէ Օրմանեանի իւր բանասիրական արժէից նկատմամբ սեպհական գիտակցութիւնն ինքնին կ'արդարացնէր այդ գաղափարը: Նա իւր գործոց զլուին

ըրաւ Ազգասպառու՛մը, և հոն թափեց խտացուց իւր բոլոր հմտութիւնը: Արդ՝ ինքն իսկ անոր յառաջարանին մէջ այսպէս կ'որակէ այդ երկասիրութիւնը. « Գործս պատրաստած ատեն ընդարձակ քարքայիլու յիշորիքներն չեմք ունեցած, և զոհացած ենք այն տեղեկութիւններով՝ զորս առաջուրնէ կազմած էինք մեր ուսումնասիրութեանց և դասաւանդութեանց առիթներով, և կամ ձեռք ձգելու բախտն ունեցանք » (12): Այսինքն շատ չափաւոր աշխատութիւն մը կը նկատէր զայս որով և « ժողովրդական դասակարգին » ձեռքը կը յանձնէր (12), որ այդքանով կը բաւականանար. համոզուած՝ իբրև զարգացած ու գիտակից մարդ՝ թէ բանասեր դասուն զոհացում տալու պատրաստութիւնը կը պակսէր իրեն: Եւ անկեղծօրէն կը կրկնէ՝ թէ « Մեր աշխատութեան մէջ պէտք չէ փնտռել՝ ոչ քննադատական հետազոտութիւններ, ոչ գիտական ուսումնասիրութիւններ, և ոչ ալ կազմաւորեալ բանավէճեր » (9). Ոչինչ ուրեմն այն բողոքէն՝ զոր կը պահանջէր բանասիրական արուեստը: Այլ ի մի ամփոփեց՝ ինչ որ կար ազգային ծանօթ սոցազիբ մատենագրութեան մէջ՝ հայ եկեղ. պատմութեան մասին, անխտիր, ծուռն ու շիտակ ի միասին, պերճախօսական ու շատագովական երանգ մը տալով անոնց՝ քան պատմական մարմին և ոսկր:

Գէթ համոզուած էր արդեօք Օրմանեան իւր գրածներուն ստուգութեան: Գուցէ մէկ մասին այո՛ւ. սակայն փաստեր կան տարակուսելու շատերու նկատմամբ: Օրինակով խօսինք, Փաւստոս կ'աւանդէ ս. Յուսկան ի կեսարիա ձեռնադրութիւնը. և Ազգասպառուի հեղինակը զայդ « կեղակած » կը գտնէ, որովհետև հետագայ պատմիչներ չեն յիշած (145): Մի՛ թէ նա այդչափ միամիտ էր, կամ պատմական օրինաց յարգան անտեղեմակ, որ հաստատար՝ թէ յաջորդ հետեակ ու համառօտող պատմագրաց լուսթիւնը, — ոչ հակառակ տեղեկութիւնը՝ որ կրնար ուրիշ աղբիւր մ'ենթադրել ու կշիռ ստանալ, —

կը հերքէ մեր Դ դարու մեծարուած հեղինակին վկայութիւնը: Նոյն տեղ փառաստի բացատրութեան դէմ՝ «ըստ սովորութեան օրինակին», Օրմանեան «իբր բացատրիկ պարագայ» կ'ընդունի ձեռնադրութիւնը: Կեղակարծ՝ կը նշանակէ սուտ, և յացտիկ՝ ճշմարիտ: Այդ մարդը կրնա՞ր միանգամայն երկու հակառակ համոզում ունենալ, կամ ասոցմէ ճրն էր արդեօք Օրմանեանինը:

Եւ որպէս զի այդ կեղակարծ-յացտիկը հաստատէր փառաստի միւս օրինակներուն դէմ, փառենի կեսարական ձեռնադրութիւնն ալ հերքեց՝ ըսելով. «Բոլոր ազգային պատմիչներուն ընդհանուր և անբացատրիկ լռութիւնը այդ պարագային վրայն»՝ զօրաւոր փաստ մըն է, և լոկ Բիւստանդի վկայութիւնը չբաւեր ըսածը հաստատելու» (156): Մի՞ թէ այս տողերը գրողը կրնա՞ր հաւատալ՝ թէ դիպուածի մը ժամանակակցին դրական վկայութիւնն անգոր կը դառնայ՝ դարեք վերջ եկող պատմչաց լռութեան պատճառաւ: Լռութիւնն արդիւնք է կամ համառօտութեան և կամ լռածը չընդունելուն. ստաջին պարագային՝ փառաստի վկայութիւնն իւր տեղը կը մնայ. իսկ երկրորդին՝ այդ անգամն պատմչաց չընդունիլը չի տարբերի Օրմանեանի չընդունելէն, և փառաստու դարձեալ իւր տեղը կը մնայ: Եթէ մեզմէ վերջ գալոց պատմագիրք յիշեն զՕրմանեան իբրև պատրիարք, և անոր Արմաշի վանահայրութիւնը լռեն՝ իբրև իրենց նիւթին անկարևոր պարագայ մը, իւր վարած այդ պաշտօնը պիտի մերժուած համարուի անոցմէ: Ո՛չ, մեզ ծանօթ Օրմանեանը իւր մատնանշած այդ զօրատր փաստերը կու տուող մարդը չէր:

Ուրիշ օրինակ մը. Նա պնդեց՝ թէ հայ եկեղեցին երեք տիեզ. ժողովներէն առդին դաւանական նոր սահմաններ չի ճանաչեր (Հայոց եկեղ. 139), և թէ ցարդ «խղճամիտ ճշգրտութեամբ անփոփոխ կը պահէ նախկին և աւանդական ձևերը», մերժելով «և յՈրդոյ յաւելուածը, առանձնական դատաստանը, մաքրարանի պատիժները,

մահուանէ ետքը անմիջապէս երանաւտ տեսութիւնը, զոյացափոխութեան զրութիւնը» և այլն (138): Ուսկի՞ց կրնար Օրմանեան գիտնալ ասոնց ոչ նախնականութիւնը, բայց եթէ մեր Դ-Ե դարու մատենագիրներէն: Սակայն անոնք ճիշդ հակառակը կը վկայեն, ինչպէս տեսանք Բագմավիպի մէջ (201-5): Արդ կարելի՞ բան է՝ որ Հոռոմայ աստուածաբանական վարժարանին պակասոր Օրմանեանը, որ իւր աշխատութեանց համար թերթած էր հին հայ մատենագրութիւնն ալ, նշմարած չլինէր այդ վկայութիւնները. կամ գոնէ ուսած չլինէր վարժարանին մէջ՝ թէ իւր նախկին կոչած ձևերը կէս մը միջին դարու և կէս մ'ալ բողոքական նութեան գիտներն էին: Հետևաբար հոս ալ իւր ներքին համոզումը չէր որ կը խօսէր:

Ասոնց պէս դեռ ուրիշ անհամար օրինակներ կրնայի ցոյց տալ, որոնք կը հաստատեն՝ թէ Օրմանեանի նպատակը չէր զուտ պատմական ճշմարտութիւններ տալ, այլ ախորժի յաներ ըսել հայ «ժողովրդական դասակարգին», որոյ Իմացական զարգացման մասին կ'երևի թէ շատ նպաստաւոր զաղափար մը չէր կազմած, որով կը կարծէր այդ կերպով զգուել զայն: Օր մը կը խորհրդակցէի իրեն հետ Ճաշերուս նկատմամբ, զոր դեռ չէի հրատարակած. և որոյ մէջ յայտնած էի անգուտ տեսութիւններ, որոնք թէպէտ ճշմարիտ, բայց ինձ կը թուէր՝ թէ կրնային ախորժաւուր չլինել ամենուն: Պատասխանեց ինձ. «Քու ուսումնասիրութիւններդ առարկայական են, և քննութեանդ արդիւնքը կրնաս ճշդիւ պարզել, մէկը իմ նպատակս տարբեր է»: Ստոյգ է. իւր ուսումնասիրութեանց վախճանը՝ քննութեան զուտ արդիւնքը տալ չէր: Անոր զբոյն ներքև հետևութիւնը կը կանխէր քան զփաստերը, զորս կը ձևէր հետևութեան վրայ, և ուսկից յառաջ կու գային իւր արուեստական ծամածռութիւնք պատմական իրողութեանց: Մեծ զբիւններն ապագային համար կը շաղարկէին. Օրմանեան խորհած չի թուիր՝

Թէ կարծած մրափող հայ միտքը կրնար  
 աթափիլ օր մը, և իւր հանդէպ խստա-  
 պահանջ դառնալ, Գիննադատութիւնը կա-  
 ընկցող ու ներող է այն բոլոր մատենա-  
 գրաց, որոնք ժամանակի գաղափարաց տի-  
 րապետութեան ներքե կամ իրենց հմտու-  
 թեան չափով՝ կրնան ակամայ սխալներ  
 գործել. բայց կը խստանայ կամատր սխա-  
 ւերու դէմ: Այս պարագայն հաշուի չա-  
 ուս: Օրմանեան իւր երկասիրութեանց մէջ:  
 Եւ Ազգապատուր, իւր այդ զուխ-գործո-  
 ցը, և գրական ձև ունեցող գրեթէ միակ  
 աշխատութիւնը, յորում նպատակն զրած  
 էր ամրացնել ժողովրդեան մտաց մէջ հին  
 ասանդութիւնները, ուռնցնելով, տալով ա-  
 նոնց պատմական երանգ ու փայլ, և  
 մեծագոյն արժէք մը յաչս անոնց՝ որ ան-  
 կարող էին գատել պատմականը վիպա-  
 կանէն, իւր իսկ վկայութեամբ՝ այդ գոր-  
 ծին վրայէն թուչելով պիտի անցնի ապա-  
 զայ բանասիրութիւնը, և պիտի չյաջողի  
 հաշտեցնել ասոր կամ միւս գրուածոց  
 հետ պանծայի բանասիրի տիտղոս:

Բ

Սիոնի մեծագոյն դժկամակութիւնն ուղ-  
 զուած է՝ հայ եկեղեցւոյ առաքելակա-  
 նութեան ասանդութիւնը խախտելուս դէմ:  
 Ընդհանուր սկզբամբ աննրբիլի կը գտնէ  
 նա այդ ասանդութիւնը ըննադատութեան  
 փորձին ենթարկելը, որուն չպիտի կա-  
 րենայ հանդուրժել: Իւր պահանջին ոյժ  
 տալու համար՝ յառաջ կը քաշէ Հոռոմայ  
 եկեղեցւոյն առաքելականութեան ասան-  
 դութիւնն ալ, անոր աստիճանին վրայ  
 կը դնէ հայկականը, և անոր գոյութեան  
 հետ կը կապէ: Այսպէս՝ առաքելոց Գոր-  
 ծոց կամ Թղթոց մէջ «Երշուած չէ, կ'ըսէ,  
 Թէ Պետրոս Հոռոմ գայած ու եկեղեցի մը  
 հաստատած ըլլայ հոն » և Պետրոս ակն-  
 արկութիւն մը կը պահանջէ գէթ Հոռով-  
 մայիցոց թղթին մէջ (162), կը կրկնէ՝  
 Թէ Լուսիբը և անոր հետևողներն ալ «բուլ-  
 ըովին կը հերքեն Պետրոս առաքեալին վե-  
 րագրուած զերբ իբրև հիմնադիր Հոռով ա-

թոռին »: Այլ Սիոն, որ աւելի մեծանձն  
 է քան իւր տեղեկատունները, կը յարէ.  
 « Բայց Հոռով ասանդութիւնը տնխախտելի  
 է այդ մասին, և դարերու հաւատքը նուի-  
 րագործած է զայն: Հոռոմ իր աթոռին  
 հիմնադիր կը դաւանի Պետրոս առաքեա-  
 լը, և մենք բանաւոր չենք գտներ հերքել  
 այդ դաւանանքին հիմը կազմող ասանդա-  
 թիւնը, որչափ ալ բարձրագոյն ըննադա-  
 տութեան փորձերուն չդիմանայ այդ »:  
 Ապա կ'ըսէ. « Իրողութիւնը այս է Հա-  
 յաստանի եկեղեցւոյն առաքելական հաս-  
 տատութեան մասին ալ ». այսինքն Թէ Թա-  
 դէոսի ու Բարձրողմէոսի քարոզութիւնն  
 ի Հայս նոյնպէս յիշուած չէ նոր կոա-  
 կարանի մէջ. և Թէ հոս ալ « որ և է  
 բանաւոր պատճառ մը չկայ ենթարկելու  
 զայն բարձրագոյն ըննադատութեան փոր-  
 ձերուն », ինչպէս ես ըրի, և որոց նոյն-  
 պէս չի դիմանար (163):

Բայց ես բողոքովին չեմ ըմբռնեմ՝ Թէ  
 ո՞ր բանաւոր պատճառաւ Հոռովոյնն ու  
 Հայկը պիտի կարենանք ենթարկել «բար-  
 ձրագոյն ըննադատութեան» փորձերուն, և  
 Պետրոսն ու Թադէոսը՝ ոչ: Մարդիկ ա-  
 նոնք, մարդիկ ասոնք. ասանդութիւն  
 մ'անոնց գործօնութիւնը, ասանդութիւն  
 մ'աստնցը. և բոլորն ալ հաւասարապէս  
 կապուած մարդկային ազգի պատմութեան  
 հետ, և անոր մաս կը կազմեն: « Բար-  
 ձրագոյն ըննադատութեան փորձերուն կա-  
 րելի չէ, կ'ըսէ, ենթարկել ըրիտոնէն-  
 կան եկեղեցիներու առաքելականութեան  
 ասանդութիւնները, որովհետև ասոնք  
 իրենց ծագման մէջ մատենագրական խըն-  
 դիր մը չէ որ կը ներկայացնեն » (191):  
 Բայց պարագայն նոյն է բոլոր պատ-  
 մութեանց համար, որոնք կը սկսին նախ  
 բերանացի ասանդուիլ, և յետոյ ուշ կամ  
 կանուխ գրի կ'առնուին ու կը դառնան  
 «մատենագրական խնդիրներ »: Այսպէս  
 նաև առաքելականութեան ասանդութիւնը  
 նախ բերանացի պատմուեր են և յետոյ  
 գրի անցեր. և ըննադատութեան գործը  
 բուն իսկ այդ գրոսածոց հետ է, ոչ բե-  
 րանացւոյն՝ որոյ պատմողները բազում

դարեր յառաջ դադրած են գոյութենէ։ Ուրեմն այդ աւանդութիւնք ալ ներկայիս հաւասարապէս «մատենագրական խնդիրներ» են, և նոյնպէս քննադատելիք։

Եթէ Սիոն կը հաւատայ՝ Օրմանեանի հետ՝ թէ աւանդութեանց ներքեւ կայ «բունը, էականը, կորիզը», — զոր ես չընդունեցայ իբր ընդհանուր օրէնք, — և թէ «քննադատութեան որ և է մեթոտին պաշտօնն է բուն աւանդութիւնը գտել ուսուցումներէն և ամփոփումներէն», և այն ժամանակ կը ստացուի «պատմական իրականութիւնն ինքնին» (164), ինչո՞ւ ապա քննադատութեան այս բարիքը չընծայել նաև առաքելականութեան աւանդութեանց։ — Որովհետև ասոնք, կը պատասխանէ Սիոն, քննադատութեան փորձերուն լին դիմանար, և բարձուն գեախններ են (165)։ այսինքն թէ ասոնց ներքև «պատմական իրականութիւն» չենք զբտներ, այլ կեղծիքներ միայն, զորս հերքելով՝ մեր ձեռք ոչինչ կը մնայ։ Ուրիշ բացատրութեամբ՝ Եկեղեցին, զոր «սիւն և հաստատութիւն ճշմարտութեան» սահմանեց առաքելալը, ունի և պետք է անխախտ պահէ իւր մէջ կեղծեաց բաժին մ'ալ, որոց մտանալու չէ քննադատութեան սղոցը։ Մի՞ թէ քանսոր է այս, բարոյական է՝ կեղծիքն իբր ճշմարտութիւն մեծարել տալ հաւատացելոց։ «Քրեւնեցէք զգիրս, պատուիրոց Յիսուս Հրէից, զի դուք համարիք նորոգ ունիլ զկեանս» (ՅՆ. Ե, 39)։ Պարտաւոր ենք մեր ալ քննել այն զբերքը՝ որոց վրայ կը հիմնենք հայ եկեղեցւոյ առաքելականութիւնը, ինքնազլուութիւնը, պարժանքները, միով բանիւ կեանքը։

Բայց այդ զբերքը կը քայքայուին՝ եթէ քննենք։ Ուրեմն անոնց վրայ հաստատակած պարժանքներն ալ իրական չեն, տոբերութիւն են, ինչո՞ւ ապա նախանձայութեան փարիւր անգոյ պարժանաց։ Եւ կեղորոնանալով առաքելականութեան վրայ, եթէ ի սկզբան անդ առաքելոց հիմնած եկեղեցիներէն «և ոչ մէկը առաքելական աթոռ մը ստեղծելու յաւակնութիւնը ու-

նեցաւ», ինչպէս Սիոն կը կարծէ, եթէ «Պօղոս և Ալպողոս պարզ պատօնեաներ» էին, և «Եկեղեցին բոլոր առաքելներուն միահաղոյն քարոզութեան արդիւնքն է» (161-62), ինչ պէտք ուրեմն մեր «յաւակնութեան» թաղական կամ բարձրդիման աթոռ ունենալու մեր աշխարհին մէջ, և այնքան կատչելու աղորձ մինչև չհանդուրժել տեսնել իւր հակապատմականութիւնը քննադատութեան նժարներուն մէջ։

«Սխալ է, կ'ըսէ Սիոն, այնպէս կարծել՝ թէ պատմորիսն ըստածը ինքնին շատ աւելի բան կ'արժէ քան աւանդութիւնը» (164)։ Եւ ասով պահ մը կը փոխադրէ զմեզ դէպ ի միջին դարը, որ այս երկուքն իրարու հետ կը շփոթէր, և որոյ վերակոչումը ի իրարու մէջ ճշմարտ անժամութիւն մը կը կազմէ։ Կան հոգեբանական վայրկեաններ, ուր լեզուն ամէն բան կրնայ ըսել, և զոր պէտք չէ միշտ լրջօրէն ատնուլ։ Հին մատենագրութիւնն ամբողջապէս հասած չէ մեզ, կը յարէ Սիոն, «և Հայաստանի եկեղեցւոյն մագման և անոր առաքելականութեան մասին ալ գրուածներ՝ ի հարկէ կարևոր մասը կը կազմէին այդ թանկագին կորուսաներուն» (164)։ Մարդկային իդձերը օտման չուներն. բայց Սիոնի երկարօրէն բացատրած «բարձրագոյն քննադատութիւնը» չի ճանաչեր ի հարկէ վրայ հաստատուած սուսութիւններ, այլ դրական փաստեր կը պահանջէ։ Ընդ հակառակն մեզ հասած հայ երիցագոյն մատենագրութեան ընդդիմութիւնը մեր առաքելականութեան, զոր ցոյց տուի աշխատութեանս կարգին, և աւելի ընդարձակօրէն անոր առանձին տպագրութեան մէջ, չի ներեր՝ որ անոնց ժամանակակից ու հակառակ գրուածներ ալ գտնուէին։ Անքնական է այդ եմբխադրութիւնը։

Վերջապէս Սիոն կը պահանջէ ու կը յեղեղէ՝ որ կամ մեր աւանդութեան օձիրք թողում, և կամ հոռոմէականինն ալ բռնեմ, որովհետև այդ երկուքը հաւասար են։ «Հայաստանի եկեղեցին, կ'ըսէ, ամե-

նեին չի վախնար իր որ և է տանգա-  
րիներ պաշտպանել է որ և է ըննազատա-  
կան փորձի հանդէպ. հերիք է՝ որ մի և  
նոյն փորձերու ենթարկուին Հոռոմի կամ  
վաղեմի եկեղեցիներուն առաքելականու-  
թեան օւանդութիւններն ալ»։ Բայց եթէ  
այդ բոլոր աւանդութիւնք հայկականով  
հանդերձ ցննազատութեան շնն դիմանար  
ըստ իրեն, միւս եկեղեցեաց առաքելակա-  
նութիւնը խախտելով, մերն ինչպէս յի  
վախնար և պաշտպանուած կը լինի թեւըս  
չի հասնիր ասոր։ Եւ դարձեալ՝ եթէ բոլոր  
եկեղեցեաց աւանդութիւնք հաւասարապէս  
խախտու և անպատմական են, Յիսուսի  
առաքեալը ո՞ր ցարդեցին ուրեմն, կամ  
որո՞նք էին անոնց հիմնած եկեղեցիները։

Ոչ, այդ յարուածն պատասխանը չի  
լուծեր խնդիրը. այլ պէտք է զանազանել։  
Կայ առաքելականութիւն՝ որ ճշմարիտ է  
ու պատմական, ինչպէս Հոռոմայ եկե-  
ղեցւոյնը, ի հենուկա լութերական համոզ-  
մանց և անոնց հետևողաց. և կայ՝ որ  
անհիմն է և անպատմական, ինչպէս եղե-  
սացւոցը, մերը, աղուանիցը և այլն, զորս  
տեսանք ու հերքեցինք։ Հիմայ պիտի  
փաստեմ՝ թէ հոռոմէականը ստոյգ է և  
անհամեմատելի հայկականին հետ, որպէս  
զի այս մասին շատերու մտքին մէջ տի-  
բող նախապաշարուը ցրուեմ, Չանազան  
են ասոր ապացոյցները, որոց զլիաւոր-  
ները միայն յառաջ կը բերեմ։

ա. Սիոն ըսաւ՝ թէ Պետրոսի առաքե-  
լութիւնն ի Հոռոմ՝ յիշուած չէ Նոր կտա-  
կարանի մէջ։ Եւ սակայն յիշուած է, և  
նոյն ինքն Պետրոսէ՝ հետևեալ կերպով.  
«Ողջոյն տայ ձեզ որ ի Բարբելոն ընտրե-  
լակից եկեղեցին է» (Ա Պեա. Ե, 13)։  
Իւլոր անոնք՝ որ կը թարթափին ս. Գրոց  
մէջ, գիտեն որ հող Բարբելոնը Հոռոմն է,  
հաստատուած նաև Յայտնութեան հե-  
տևեալ ակներև վկայութեամբ։ Հոն կը  
նկարագրուի այլաբանական ծիրանազգեաց  
կին մը, որոյ ճակատին զրուած էր՝ «մեծն  
Բարբելոն, մայր պոռնիկաց և զարշելեաց  
երկրի»։ Նոյնպէս և «ծօրն լերիքը, ուր  
կինն նստեալ էր ի վերայ նոցա» (ԺԷ,

4-9)։ Արդ՝ Գաղղէացւոց համանուն մայ-  
րացադաջը նստած էր և է ցարդ դաշտի  
մէջ՝ Եփրատի ափին, մինչ Հոռոմ արգարե  
կառուցուած է հօթն բլրոց վրայ։ Հե-  
տևաբար Պետրոսի և Յայտնութեան Բա-  
րբելոնը՝ ապականութեամբ ու շարութեամբ  
ցաղղէականին նմանող և փոխարեարար  
նոյնպէս կոչուած հեթանոս Հոռոմն էր,  
ուր կը գտնուէր և ուկից կը գրէր Պե-  
տրոս իւր առաջին թուղթը, և տեղւոյն  
եկեղեցիէն ողջոյն կը յղէր։ Եւ որովհե-  
տև առաքելոց զործն էր շըջիլ ստէպ,  
սփռել և ամրացնել աւետարանը, Պողոսի  
առ Հոռովմայեցիս թղթին մէջ Պետրոսի  
անյիշատակութիւնը կրնայ մեկնուիլ նաև  
ոստանէն առձամայ բացակայութեամբ։

բ. Կայ Պետրոսի արշակերտին ս. երկ-  
րորդ յաջորդին (96էն) ս. Կղեմայ առ  
կորնթացիս Ա թուղթը, յորում կը կար-  
դանք այսպէս. «Փանք մերձատր նա-  
հատակաց, և մեր դարուն շքեղ օրինակ  
սանք... մեր աչաց առջև զնենք սուրբ  
առաքեալները։ Անիրաւ նախանձի պատ-  
ճառաւ Պետրոս ոչ մէկ կամ երկու, այլ  
շատ նեղութիւն կրեն, և այսպէս մարտի-  
րտանալով՝ իրեն արձամանի փառաց վայրը  
վերադաւ։ Պողոս նախանձի համար համ-  
բերութեամբ ասորաւ վշտաց... Արևմտից  
սահմանը հասաւ, և իշխանաց հրամանաւ  
մարտիրոս եղաւ» (Patr. Graec. I, 217)։  
Հոռոմայ հայրապետիս առաքեալներէն  
տուած օրինակներդ երկուք են միայն,  
Պետրոս ու Պողոս. և զասոնք կու տայ,  
որովհետև իրեն մերձատր նախատկեր  
էին, այսինքն Հոռոմայ մէջ ընակած և հոն  
ալ մարտիրոսացած։ Եւ հաւանական հա-  
մարելի է՝ թէ Կղեմէս Լութերէն լաւ գի-  
տէր իւր վարդապետին առաքելութեան  
ու մահուան վայրը։

գ. Ս. Իզնատիոս՝ Անտիոքայ հայրա-  
պետը, առ Հոռովմայեցիս թղթին մէջ (իւր  
115ին) նոյնը կը հաստատէր, ըսելով.  
«Պետրոսի և Պողոսի այս շեմ հոգար ձեք  
մասին. անոնց առաքեալը Յիսուսի Քրիս-  
տոսի, իսկ ես կրտսերագոյն» և այլն  
(անդ, V, 808)։ Ուրեմն երկու առա-

քեալը հովուեր ու խնամեր էին Հոռվ-  
ժայեցիները, որոց շափով անոնց օգտա-  
կար հանդիսանալու անկարող կը խոստո-  
վանէր իր գնատիրոս իւր անձը։

Գ. Ս. Իրենէոս եպս. Լիոնի, որ Բ  
զարու երկրորդ կիսուն կ'ապրէր, Հոռմայ  
հայրապետաց յաջորդութիւնը գրեց, «մե-  
ծագոյն և հնագոյն և ամենուն ծանօթ  
եկեղեցւոյն, որ երկու փաստաւորագոյն  
առաքեալներէն՝ Պետրոսէ ու Պօղոսէ հիմ-  
նասծ ու կազմուած է Հոռմայ մէջ» (Vita  
cant, VII, 2430)։ Եստ որոշ կը խօսի  
իւր հնութեամբ պատկանելի այս վկայն  
ևս։

Աւելորդ է հետագայ բազմաթիւ վկայից  
խօսքերն ալ կոչել հոս. զի այսչափն իսկ  
բաւական է համոզելու զՍիոն, եթէ ուզէ,  
թէ Պետրոս իսկապէս եղեր է ի Հոռովմ,  
առաջնորդեր ու նահատակուեր նոյն ցա-  
ղաքին մէջ. և թէ պատմութիւն է այս, ոչ  
աւանդութիւն. և ասոր համար միայն աւ-  
խախտելի է, և ոչ թէ որովհետև և դա-  
րերու հաւատքը նուիրագործած է զայն»։  
Այս նշմարութիւնս իրեն յիշեցնելու պէտք  
պիտի չթողուր Սիոն, եթէ Հոռմայ աթո-  
ոսն վերաբերեալ պատմական տեղեկու-  
թիւնները փոխանակ Լուսիբրի հարցնելու,  
ուղղակի աղբիւրէն առնուր, որ նշգրտու-  
թեան հետ աւելի բնական ալ կը լինէր։  
Պէտք է նաև զիտել տամ՝ որ ոչ մէկ ու-  
րիշ քրիստոնեայ եկեղեցի Պետրոսի մա-  
սին չունի հոռմէականին ներհակ աւան-  
դութիւն մը, որ իրաւունք ասք զայն կա-  
կածի ենթարկելու։

Ընդ հակառակն մեր առաջին առա-

քեալը թարգմտ՝ նախ Եղեհացիք ստեղ-  
ծեցին Գ դարուն՝ իրենց համար։ Եստոյ  
Հայեր, Պարսիկներ և Աղուանք անոցմէ  
յափշտակեցին զայն՝ իրենց իսկ վկայու-  
թեամբ, տալով անոր մէկէ աւելի մասեր  
ու գերեզմաններ։ Եւ Հայք է դարուն կեր-  
տեցին Բարթողոմէոսի քարոզութիւնն ալ,  
միւսերէն աւելի բան մ'ունենալու հա-  
մար, մինչ անոր առաքելութեան ու նա-  
հատակութեան տեղերը նշողած էին ար-  
տաքին և քան զմերն հնագոյն մատենա-  
գրութեանէ, Այս ամէնը հաստատեցինք փաս-  
տերով։ Որով կը տեսնենք՝ թէ մեր ու  
հոռմէական առաքելականութիւնը այնքան  
հեռի են իրարմէ՝ որքան երկու աշխարհ-  
ները։ Եւ կրնանք՝ առանց խղճահարու-  
թեան՝ Բ բարձրագոյն քննադատութեան »  
փորձերուն ենթարկել մերը միայն, ու  
չվրդովել հոռմէականին հանգիստը։

Եր յուսամ՝ որ այս բացատրութեանէս  
վերջ Սիոն կը հաւանի ձեռնարկութեանս,  
որոյ նպատակը շատ մաքուր և ազգա-  
սիրական է. ազատել մեր եկեղեցական  
պատմութիւնն աւանդութեանց շարժան զե-  
տիկներէն, և դնել հաստատուն նահապար-  
հի վրայ, անկախարար ամէն նկատուածերէ,  
որպէս զի եւրոպացիք չհարկադրին իրենք  
ուսուցանել մեզ մեր իրական պատմու-  
թիւնը, և միանգամայն չծիծաղին մեր  
աւանդապաշտ միամտութեան վրայ, ինչ-  
պէս ըրին արդէն ոմանք։

Եթէ կ'ուզենք զարգացած ազգերու  
կարգը մտնել, զգացու՛մը զոհելու ենք  
պատմութեան։ Այս է իմ համոզումս։

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՄԱՆ. ԽՄԲԱՍԻՐ. — Հոս կը յանդուրէ ի գիտութիւն  
Յօղաւածաբն ընդդմախօս Քերթեւում, որ Սրմանան  
Սրբազան իր փեղեմուքեան որով ալ, այսինքն երբ է  
այս ընծայեց իւր ԱԶԳԱՊՈՍՏՈՍԵՐ, խիտ առաջու և

արդար քննադատութեան հարուածներու ենթարկուե-  
ցաւ Հ. Յ. Ալգրեի կողմանէ (տես Բազմ. 1913 էջ  
332-334)։